Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 06

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<04>> մայիսի 2023թ. գ. Երևան

2023 թվականի մայիսի 4-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և անդամ Ռ. Այվազյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու ներկայացված 4 հայտերի քննարկում:

2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոբոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

3.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների

տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.1 Քննարկվեց՝

<<ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ-ԲՀ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի մարտի 30-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և ապրիլի 7-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Եսայան փողոց թիվ 16 գործունեության վայրում:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի մարտի 30-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Եսայան փողոց թիվ 16 գործունեության վայրում: 2023 թվականի ապրիլի 7-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Խ. Սողոմոնյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ-ԲՀ>> ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Մարինե Յուրիկի Անտոնյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի մարտի 28-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և ապրիլի 7-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրում և գազաբալոնների պարբերական վկայագրում տեսակի ներդիրներ տրամադրելու մասին՝ ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գ. Պռոշյան, Գ. Չաուշի փողոց 131 գործունեության վայրում:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի մարտի 28-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրում և գազաբալոնների պարբերական վկայագրում տեսակի ներդիրներ տրամադրելու մասին՝ ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գ. Պռոշյան, Գ. Չաուշի փողոց 131 գործունեության վայրում:

2023 թվականի ապրիլի 7-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Խ. Սողոմոնյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՄԱՐԻՆԵ ՅՈՒՐԻԿԻ ԱՆՏՈՆՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.3 Քննարկվեց՝

<<ՀԲՓՈՎԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի մարտի 30-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման տեսակի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի մարտի 30-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի ապրիլի 4-ի ԱՍ/25.1/9387-2023 գրությամբ Կազմակերպությանը տեղեկացվել է հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ, մասնավորապես՝ առ այն, որ բացակայում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ գործունեության համար նախատեսված արտադրական բազայի (տարածքների, շինությունների) հատակագիծը՝ կազմված որակավորում ունեցող անձի կողմից, որը պարունակում է տեղեկություն գազաբալոնների պարբերական վկայագրման և ճնշարկային առանձնացված տեղամասերի համար նախատեսված շինությունների պարամետրերի վերաբերյալ (երկարություն, լայնություն, բարձրություն, մուտք-ելք), Սարգիս Հարությունյանի որակավորման վկայականը տրամադրված է «Երևան» ՍՊԸ-ի ուսումնական կենտրոնի կողմից, մինչդեռ սույն կազմակերպությունը գրանցված չէ հավատարմագրման ազգային մարմնի ռեեստրում և ուսումնական պլանները հաստատված չեն կրթության լիազոր մարմնի կողմից, ուստի վկայականը վավեր չէ և բացակայում են ստուգաչափված թվային ճնշաչափի առկայությունը հավաստող ստուգաչափման վկայականը:

Միաժամանակ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում

հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը չի ներկայացրել լրացուցիչ նյութեր և չի վերացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի ապրիլի 4-ի ԱՍ/25.1/9387-2023 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին :

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՀԲՓՈՎԵՐ>> ՍՊԸ	0 կողմ, 4 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.4 Քննարկվեց՝

<<ԳԱԳ-ՍԱՆ ԳԱԶ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի մարտի 29-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման տեսակի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի մարտի 29-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի մարտի 31-ի ԱՍ/25.1/9326-2023 գրությամբ Կազմակերպությանը տեղեկացվել է հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ, մասնավորապես՝ առ այն, որ հայտ Ձև N 1-ում սխալ է նշված Կազմակերպության գտնվելու վայրը, բացակայում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1998-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ գործունեության համար նախատեսված արտադրական բազայի (տարածքների, շինությունների) հատակագիծը՝ կազմված որակավորում ունեցող անձի կողմից, որը պարունակում է տեղեկություն գազաբալոնների պարբերական վկայագրման և ճնշարկային առանձնացված տեղամասերի համար նախատեսված շինությունների պարամետրերի վերաբերյալ (երկարություն, լայնություն, բարձրություն, մուտք-ելք) և բացակայում են ստուգաչափված թվային ճնշաչափի և կշեռքի առկայությունը հավաստող ստուգաչափման վկայականները:

Միաժամանակ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը չի ներկայացրել լրացուցիչ նյութեր և չի վերացրել ներկայացրել 04.04.2023թ. ներկայացրել է լրացուցիչ նյութեր և չի վերացրել ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի ապրիլի 4-ի ԱՍ/25.1/9326-2023 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին :

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԳԱԳ-ՍԱՆ ԳԱԶ>> ՍՊԸ	0 կողմ, 4 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. «ՏԱՔՍԻ ՏԱՎՐՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05202 լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

«ՏԱՔՍԻ ՏԱՎՐՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի ապրիլի 17-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05202 լիցենզիայի թվով երեք նոր ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց Կազմակերպության 2023 թվականի ապրիլի 17-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05202 լիցենզիայի թվով երեք նոր ներդիրներ տրամադրելու մասին և տեղեկացրեց, որ Կազմակերպությունը ներկա պահին գործում է 28 ներդիրներով և դիմումով հայցում է տրամադրել ևս 3 ներդիրներ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՏԱՔՍԻ ՏԱՎՐՈՍ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

Ֆիզիկական անձ՝ Սերյոժ Գրիշայի Դանիելյանի 28.04.2023թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Ֆիզիկական անձ ՝ Սերյոժ Գրիշայի Դանիելյանի 28.04.2023թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով

ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտը ուսումնասիրվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել է ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն անցնելու փաստը և գազաբալոնների վկայագրման և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթի բնօրինակները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՍԵՐՅՈԺ ԳՐԻՇԱՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան